

ՀԱՐՈՅԵԱՆ

ՀԱՆԴԻՍ

ԲԱՐՈՅԵԱՆ, ԲՆԵԿԵՆ, ԲԱՆԵՍԻՐԵԱՆ ԵՒ ԸՌԵՒՏՐԵԱՆ

ԳԻՏԵԼԵՑ

ՀՐԶԱՆ ԳԵՅԱՄՍ ԵԱՅ

ՀԱՐԱԳԻՐԻՐ

ԳՐ. Պ. ՊԱՐՏԻԶՊԵՆՍՆ Տ. ԳԱՐԱԿԱՅԵՆ

Ա. ՏԱՐԻ. Ա. ՀՐԶԱՆ

1862

ԹԻԻ 5. ԱՊՐԻԼ 5

Հրատարակի՜ ամիսը երկու անգամ.
Վեցամեայ գինն է 8 ֆրանկ.
Իջմիրեն դուրս ճամբու ծախքը առնողին ջրայ է.
Ստորագրութիւնները շրջանին սկիզբէն կըսկսին.
Հանգեսիս վերաբերեալ որ եւ իցէ նամակ եւ գրութիւն
անօրէն լին ցիտի ու չցուի.
Ստորագրութեան տեղերն են.

Իջմիր՝ Ճաղիկի գրասենեակը, Կիրիթ Խոն, Թիւ 3.
Կ. Պօզիս, մեծարգոյ խ. Թ. Գաշէնտէրեանին սենեակը.
Պաշտօն ղաջար կամուրջին գշուից՝ եւ Ընթերցատարաց ընկե-
րութեան ընթերցարանը, Մեծ նոր Խոն, Թիւ 6:
Հաշեղ, մեծարգոյ Յ. Ս. Քիւրճեանօֆ:
Փարիզ, M. A. Mourad, Rue du Dragon, 26.
Մանչեսթըր, D. Ekisler, George Street, 78.

ԲԱՐՈՅԵԱՆ

ԿԻՆ

Հատ անդամ՝ պատեհութիւն ունեցայ գիտելու
իզական սերին այն արութիւնը՝ որով բաղդի սաս-
տիկ եւ ճնշող հարուածներուն գէտ՝ կը դնեն:
Ենպիսի վշտեր եւ թշուառութիւններ որոնք այր
մարդը յուսահատեցնելով՝ մինչեւ անգամ դերեղ-
ման կ'իջեցնեն զանի, կարծես թէ քնքուշ սերին
բովանգակ զօրութիւնը յառաջ կը գրգեն, եւ այն
կերպ արութիւն եւ մեծանձնութիւն կը շնորհեն ա-
նոր բնութեանը՝ որ երբեմն դերբնականի կը մեր-
ձենայ: Չ'կայ արգարե աւելի սրտառու տեսարան
փոքր քան տեսնել փափուկ եւ քնքուշ կին մի՛ որ իր

կենաց ճամբուն երջանիկ շաղին մէջ անզօր եւ
ուրիշի պաշտպանութեանը կարօտ էակ մի է, եւ
նաեւ թեթեւ դժբաղդութեան մի կարի զղայուն,
յանկարծ մտաւորական զօրութեամբ մի կ'արիա-
նայ, երկանը աղետից մխիթար ու պաշտպան կը
կանգնի եւ անընկճելի արութեամբ մի թըշուառու-
թեանց դառնաղէտ հարուածներուն կը դիմադրուէ:

Ինչպէս որ թը՝ իր դալարի տերեւները երկար
ատեն կաղնիին պատատած՝ արեւուն լոյսը առաւել-
լաբար կը վայելէ, յանկարծ երբ իր աս ապաւի-
նած տունը կայծակէն արմատաքի խլուելով յեր-
կիր կործանի, այն՝ վերտին իր նորածղի եւ
փայփայիչ տերեւները ահոր բոլորովը կը յենու
եւ ջախջախուած ոստերը կը սլափէ, սոյնպէս ալ
գեղեցիկապէս սահմանուած է՝ Կախախնամութենէ,
որ կին արարած մի՛ մինչդեռ իր երկանը երջանիկ

ու բարեբաղդ փիլիսոփային մէջ լոկ զարդ մի է, և անոր կ'ապաւինի, թշուառութեան մէջ ալ՝ ինք կը կանգնի ապաւեն ու մոխիթար, կը պատէ որպէս թէ իր անձը իր երկանը բնութեան թաքստի և գերբուկ խորշերուն մէջ, կ'ուզէ անոր կորակոր գլուխը, և կը կաղդուրէ վերստին անոր յուսաբէկ սիրտը:

Անգամ մի խնդակից լինէի բարեկամներէս մէկուն իր ընտանեացը համար որոնք զօրաւոր սիրով իրարու հետ կ'ապուած էին: «Աւրիշ երջանկութիւն չեմ՝ բարեմաղթեք քեզ», ըսաւ եւանդեամբ մի, «քան թէ կին մի և ընտանիք ունենալ: Երջանկութեանդ մէջ ուրախակից են անոնք, իսկ թշուառութեանդ մէջ վշտակից և կ'սփոփեն զքեզ»: Եւ արգարեւ ամուսնացեալը ամուրիէն աւելի իր կենաց դժբաղդ փիլիսոփայ կարող է դարմանել և կրկին յաջողութիւն ձեռք բերել, մասնաւորապէս որ անոք և անօգնական սիրելի ընտանեաց մի պէտքը զգայ, որոնք իրեն ապաւինած են և որով աւելի կը զրգոյի գործելու, այլ զլիաւորաբար առտընին զգուանօք և փաղաքշանօք իր հոգին սփոփում գտնելով կը վերակենդանանայ և իր անձնասիրութիւնը չի վերաւորեր տեսնելով՝ որ թէ և բոլոր աշխարհ իրեն համար մութ է և ինք անոր մէջ գրեթէ գծուծ էակ մի դարձած, այլ կրկին իր ընտանեացը մէջ սիրոյ փոքրիկ աշխարհ մի նկատէ՝ որոյ ինքն է բացարձակ տէր: Սակայն ամուրի մէջ կը դիւրաւ կործանման մէջ դաճալի ժելու և իր անձը երեսի վրայ ձգելու կ'ենթակայանայ, երբ կ'երեւակայէ թէ ինք աշխարհի վրայ գոյցէս առանձին, անտերունչ էակ մի է եղած, և այսպէս իր սիրտը կը վհատի և աւերակ կը դառնայ նման ամայի բնակութեան մի որ բնակիչ չգտնուելով՝ աւերի և կործանում վրայ կը հասնին, կը տրեւն: Աս դիտողութիւնները՝ առանին համառօտ պատմութիւն մի յիշել տան ինձ, որոյ անգամ մի աւանառես եղած էի: Ի էգլի, մտերիմ բարեկամ համեստ և գեղանի օրիորդի մը հետ ամուսնացած էր, որ ընկերական վայելումներու մէջ զարգացած էր: Սաւոյգ է որ աս օրիորդը մեծ հարստութիւն մի չունէր՝ այլ բարեկամ մեծատուն էր և կը զուարճանար երեւակայութեամբ թէ օրիորդին բոլոր մեծամեծ բաղձանացը պատրաստ օգնական կանգնելով՝ պիտի շնորհէր անոր այն քաղցը և փափուկ վայելումները և երեւակայութիւնները որոնք ընհանրապէս կանանց սերին վրայ տեսակ մի կախարդութիւն կը սրբոնեն: «Ընոր կեանքը», կըսէր բարեկամս, «ոգիի մը պատմութիւն պիտի գտնայ»: Եւ այն իսկ երկաքանչիւրոյն բնաւորութեան

յը մէջ ծագած տորթերութիւնը՝ դաշնակաւոր յարմարութիւն մի յառաջ կը բերէր: Բարեկամս սակաւ ինչ տարօրինակ և ծանրաբարոյ անձ մի էր՝ իսկ օրիորդը բոլորովին կայտառ և զուարթաբարոյ: Հասաւ անգամ դիտէի ես, թէ ինչպէս բարեկամս լոկ մնջիլ բերկրութեամբ մի պլուցեալ կը նայէ իւր ամուսնոյն երեսը ընկերութեան մէջ, որոյ զուարճութիւն եղած էր իր կայտառ և զուարթ բնաւորութեամբը, և թէ ինչպէս ասիկայ ալ դուլութեանց և դրուատեաց մէջ՝ նորէն աշուրները գէտի բարեկամիս կը դարձնէր որպէս թէ անորմէ միայն կ'ստատէր պատիւ և ակնածութիւն: Երբ իր երկանը թեւը մոտէր՝ իր բարակ կազմուածքը գեղեցիկ ընդդիմադրական մի յայտնէր անոր բարձրահասակ և յաղթ մարմնոյն քով: Իր սիրարկու և վստահական հայեցումները՝ մեծաշուք սիւզանաց և սիրաջերմ խանդաղատանաց զղացում մի պատճառէր ամուսնոյն, որ իբրեւ թէ գուժ և սէր նուիրէր իրեն կոթնած սիրուն բեռին՝ նոյն իսկ ասոր քնքուշ ակարութեանը համար: Վերջապէս չկային ամուսիններ որ ստոնցմէ աւելի երջանկութեան գեղեցիկ ակնկալութիւններով՝ նորածին և շնորհազեղ ամուսնութեան մի ծաղկաւետ շաղկին մէջ այնպէս յառաջանային:

Սակայն բարեկամիս դժբաղդութիւնն էր որ իր հարստութիւնը մեծամեծ ձեռնարկութեանց գործածել սկսաւ, որովհետեւ ամուսնանալէ անմիջապէս քանի մի ամիս ետեւ, ձախորդ և դժբաղդ պառազաներ յաջորդաբար վրայ գալով՝ իր բոլոր հարստութիւնը կորսնցուց և գրեթէ բոլորովին աղքատութեան մէջ ինկաւ: Դամանակ մի դաղտնի պահեց իր այս վիճակը, կերպարանքը տխուր և կախարդ, սիրալ յուսաբէկ, կեանքը՝ իրեն համար մահուան յամեցուցիչ ազդեցութիւն դարձած էր, և որն որ աւելի անտանելի կ'երեւէր երբ ինքզինքը հարկադրած գտնէր կնկանը ներկայութեանը ուրախ զուարթ կերպարանք պահելու, վասն զի չէր կրնար իր դժբաղդ փիլիսոփայ անոր յայտնել որով և զանի ընկճել ու ճնշել: Եւ իր կինը՝ սիրոյ սուր աչքով մի գիտեց և տեսաւ թէ իր ամուսինը աղէկ վիճակի մէջ չէր: Ար զննէր անոր փոփոխակի հայեցումները և հեղձամղձուկ հառաչանքները, և անոր զուարթ երեւակայութեան տկար և ցուրտ կերպերէն չէր խաբուեր, իր բնական կայտառութեամբը և քաղցր զգուանքներով՝ անոր դժբաղդութիւնը վերստին յերջանկութիւն փոխելու կ'աշխատէր, բայց անով անոր սրտին նեղութեան կը մոխէր: Բայտ որում քանի իր այրը առաւել առիթներ տեսնէր իր ամուսինը սիրելու՝ այնքան

ուած կը մնայ հոն, այլ կը բռնկի այն, կը բորբոքի, կը լուսաւորի, կը փայլի ձախողութեան խաւար ժամուն մէջ: Չկայ մէկը որ կարողանայ դիտնալու թէ ի՞նչ է և ի՞նչ կարծէ իր կէնը, չեկայ մէկը որ կարողանայ դիտնալու թէ ի՞նչ սփոփարար հրեշտակ մի է անիկայ, մինչև որ անոր հետ աշխարհիս փորձութեանց մէջ չկոխայ”:

Խօսակցութեանս եռանդուն եղանակը և այլաբանական ձևը մեծ աղբեղութիւն ունեցաւ Լէզլի բարեկամիս վրայ, և անոր խռովայոյդ երեակայութիւնը պարզեց խաղաղեցուց: Այլ խմայց թէ ինչպէս խօսելու է անոր հետ, ուստի նոյն ձևով խօսակցութիւնս շարունակելով՝ հուսկ ուրեմն համոզեցի զանի որ տուն երթայ և իր վշտաղգեաց սիրտը ամուսնոյն բանայ:

Այսու ամենայնիւ աս ալ կը խոստովանիմ որ բաւական անձկութիւնով մի ըսածներուս հետեւանաց սպասէի, վասն զի ո՞վ կրնայ վտահալ այնպիսի մէկու մի արութեանը վրայ որոյ կեանքը բոլորովին դուարթ և ցնծալից վիճակի մէջ կը գտնուէր: Սիւթէ հաւանական բան չէր որ իր ուրախ և կայտառ բնաւորութիւնը յանկարծ իր առջի եղած դժուած խոնարհութեան մի անշուք և զառիթափ ճամբան տեսնելով՝ դուրս վերցնէր և վերստին իր պայծառ և լուսաւոր աշխարհին սահմաններուն ուզէր յենուել, զոր մինչև անատեն կը վայելէր:

Բաց ի ասոնցմէ ընկերական վայելումներ տեսնող վիճակի մը կործանումը այնքան անթիւ արքա մակի և տագնապեցուցիչ վշտերու կ’ենթակայանայ, որոնցմէ ուրիշ վիճակներ բոլորովին ազատ են:

(Սուրբալը Կեփեալ Բ-ով)

Բ Ն Ս Ո Ւ Ր Ա Վ Ս Ն

ՄԱՐԴՈՒՍ ԶՈՐՍ ՏԱՐԵՐԸ

ՏԵՍԱՐԱՆՔ ԿԵՆԱՑ

Բ. — Չափազանցութիւն եւ երիտասարդութիւն:

— Սուրբ ցեղերութիւն մարդկային:

(Տէ՛ Բէ- 3. Երէ՛ 19):

Տիգրան՝ առաջատարները պարզած՝ երիտասարդութեան հոսանքին մէջ յառաջ կը դիմէ: Իւր վարժապետաց աշխատանքը կը լմնայ, և իւր յա-

տուկ մտաց և կամաց զործողութիւնները կը սկսին: Չարմանալի՛ բան. այն միջոցը՝ յորում աշխարհի հետ մեր կոխը սկսելու քիչ մի զօրութիւն ստացած ենք, ահա՛, այն ժամանակն է որ մեր կարողութեան վրայ խիստ մեծ համարում կունենանք:

Աս մանաւանդ մեր դպրոցական վկայագիրներէն հպարտացած՝ մեր վրայ կուգայ այս յանդուգն վրտասահութիւնը: Տիգրան՝ ահա այս ժամանակին մէջը կը գտնուի: Իւր ընդունած դասական կրթութիւնը՝ իրեն համար սպառազինութիւն մի է: Այլ յուսայ որ՝ իւր մաթեմատիկական ծանօթութեանց օգնակաւութեամբ՝ կենաց բոլոր խնդիրները լուծելու ձեռնհաս կրնայ ըլլալ, և կը կարծէ որ իւր արամբանութեամբը պիտի կարենայ քաղաքակաւութեան բոլոր կայերը քակել:

Չմտածեր բնաւ թէ կրնայ սխալանաց մէջ իյնալ: Ամեն յաղթութեանց ապահով է, և կը զարմանայ որ իրեն հանգիստներուն հետաքրքրութիւնը չըշարժիր՝ զինքը տեսնելովքին: Սորա ու խոթող կերպարանքով՝ պանդուկ մի կը մտնէ, կերթայ սեղանը ակն կերպով կը նստի, իբր թէ իւր ներկայութեամբը պիտի պատուէ սեղանակիցները, մըտածելով որ իւր չորս գին եղող մարդիկը չեն կըրնար երեակայել որ իրենց մօտ կը գտնուի երեւելի բանասէր մի, որ կարծեաց ընդհանուր հալման վրայ խիստ գեղեցիկ յօդուած մի հրատարակած է:

Խեղճ Տիգրանը չմտածեր որ վարժարանին նստարաններէն բաժնուած ատենը ինչ որ էր նոյնն է դարձեալ, և թէ՛ հիմայ ևս կենաց փոփոխականութեանց դէմ կուռելու մասին դեռ տղայ է, թէպէտ և լեղուաց և դրականութեան վրայ տեղեկութիւն ունի: Եղած երկրին մէջ՝ կը փափաքի իւր մտաց կարողութիւնները ի գործ դնել, բայց վիպական դրամները յարդ՝ չեն գտներ հոն: Այն տեղ ընտրողութիւն, զործողութիւն և գործի մէջ արագութիւն կը փնտռուի: Թող այս՝ իւր հայրն ալ, որ սէգ, ծանր և հիմուտ մէկն էր, քսան տարեկան երիտասարդի մը մտածին երեակայութիւնները շատ աղէկ կը հասկնար: Անիկայ՝ Տիգրանին դպրոցը եղած ժամանակ ձեռք բերած յաջողութիւնները բանի տեղ չգնելով՝ կըստիպէ զայն ճանապարհորդութիւն ընել, զմարդիկ աւելի մօտէն տեսնելու և՛ զանոնք ճանչնալու համար:

Մօրը վրայ դողում մի կուգայ, անոր՝ ընտանեաց կապերէն հեռանալը տեսնելով: Ամախ, ներ կը դրէ անոր, որոնց մէջի անկեղծ սիրոյ նշանները՝ անոր ներքին դին կսկիծ մի կը պատճառեն և անոր հառաչելու առիթ կուտան: Բայց այսու ա մենայնիւ ասդիս անդին ուրիշ սիրոյ նշաններ ու-

